Բժշկական թափոնների կատեգորիաները

ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ	ՕՐԻՆԱԿՆԵՐ
Ծակող/կտրող թափոններ	Ենթամաշկային ներարկման ասեղներ, ներարկիչներ, կարեր դնելու ասեղներ, վիրադանակներ և այլ սայրեր, լանցետներ, սղոցներ, դանակներ, կոտրատված կամ չկոտրված ապակի, սրվակներ, փողրակներ, զոնդեր, կաթոցիկներ և այլն, որոնք կրկին չեն օգտագործվում կամ չեն վերամաշակվում:
Ցանքսեր և շտամներ	Մարդկանցից վերցված ցանքսեր, վարակիչ ագենտների շտամներ, դեն նետված կենդանի և վիրուլենտությունը թուլացած պատվաստանյութեր կամ շիճուկ, ցանքսի ապակիներ և այլ պարագաներ, որ օգտագործվում են բջջային ցանքսերը տեղափոխելու, սրսկելու կամ խառնելու համար:
Մարդկային արյուն, արյան բաղադրամասեր և մարմնական հեղուկներ	Ազատորեն հոսող արյուն կամ արյան բաղադրիչներ, սերմնահեղուկ, հեշտոցային արտազատուկներ, ողնուղեղային, սինովյալ, պլեվռալ, պերիկարդիալ, որովայնախոռոչի, ամնիոտիկ հեղուկներ, թուք՝ ատամնաբուժական պրոցեդուրաներում և արյունով աղտոտված մարմնական հեղուկներ, կաթկթող արյունով կամ վերոնշյալ հեղուկներով աղտոտված թափոններ:
Մեկուսացված բուժումից գոյացած թափոններ	Աղտոտված նյութեր խիստ վարակիչ հիվանդություններ ունեցող հիվանդներից:
Ախտաբանական (պաթոլոգիական) թափոններ	Հյուսվածքներ, օրգաններ վիրահատության, դիահերձման կամ այլ պրոցեդուրաների ընթացքում հեռացված անատոմիական թափոններ /մարմնի ճանաչելի մասեր, բացի ատամներից/:

Առանձնացման/Հավաքման տարաներ

Բժշկական թափոնները պետք է լցվեն կենսաբանական վտանգավորության միջազգային խորհրդանշանով պիտակավորված տարաներում:

Կատեգորիաներ	Տարայի կամ պարկի բնութագրերը	Օրինակներ
Ծակող/ կտրող թափոններ	Տարան պետք է ծակվող չլինի, կողքերից և հատակից արտահոսք չտա, և լինի դիմացկուն Տարան պետք է ունենա կենսաբանական վտանգավորության պիտակ Տարան պետք է լինի փակվող, եթե օգտագործվում է ծակող/կտրող թափոններ տեղափոխելու համար: Նշում: Շեշտը պետք է դնել ասեղները նորից չփակելու վրա	Դատարկ պլաստիկ շշեր՝ կենսաբանական վտանգավորության պիտակով Ստվարաթղթե տուփ՝ կենսաբանական վտանգավորության պիտակով Պլաստիկ կոշտ տարա կենսաբանական վտանգավորության պիտակով Թիթեղյա պահածոյատուփեր՝ կափարիչներով Կենսաբանական վտանգավորության պիտակի փոխարեն կարելի է նաև օգտագործել «Զգույշ- ծակող/կտրող թափոններ են» բառերը
Մարդկային արյուն, արյան բաղադրամասեր և մարմնական հեղուկներ /պինդ և կիսահեղուկ թափոններ/	Ցելոֆանե տոպրակները պետք է արտահոսք չունենան, պատրաստված լինեն այնպես, որպեսզի օգտագործելիս չպատռվեն և չպայթեն: Ցելոֆանե տոպրակը պետք է դնել կոշտ տարայի մեջ: Կոշտ տարան պետք է արտահոսք չունենա, լինի դիմացկուն, ունենա կենսաբանական վտանգավորության պիտակ կամ գունային կոդ	Ցելոֆանե տոպրակ, որը դրվում է դեղին ներկված աղբամանի մեջ կենսաբանական վտանգավորության պիտակով Ցելոֆանե դեղին տոպրակներ պետք է օգտագործել դրանք ձեռք բերելուն պես
Մեկուսացված բուժումից	Նույնն է ինչ վերը	Նույնն է ինչ վերը- բնորոշել որպես մեկուսացված բուժումից գոյացած

գոյացած թափոններ		թափոններ
Ախտաբանական /պաթոլոգիական/ թափոններ	Նույնն է ինչ վերը	Նույնն է ինչ վերը- բնորոշել որպես ախտաբանական թափոններ
Չծակող թափոններ Հեղուկ թափոններ	Տարան պետք է արտահոսք չունենա և լինի դիմացկուն: Տարան պետք է ունենա կենսաբանական վտանգավորության պիտակ, եթե օգտագործվելու է թափոնները փոխադրելու համար Տարան պետք է այնպես նախագծված լինի, որ տեղափոխելիս պարունակությունը չթափվի:	Շշեր, սրվակներ, պլաստիկ տարաներ, կանիստրեր, կափարիչներով դույլեր:

Կենսաբանական վտանգավորության նշանը կարելի է ներկել տարաների վրա: Բժշկական թափոնների հավաքման համար օգտագործվող աղբամանները և տաշտերը պետք է պարբերաբար լվացվեն և ախտահանվեն:

1. Փոխադրում բուժհիմնարկի ներսում

Բժշկական թափոնների շարժումը պետք է կատարվի օգտագործելով հերմետիկ փակվող տարաներ և վարակի կանխարգելման արդյունավետ պրակտիկաներ: Թափոններ տեղափոխողները պետք է մշտապես կրեն ձեռնոցներ: Բժշկական թափոնների համար օգտագործվող տարաները պետք է օգտագործվեն միայն այդ նպատակի համար: Դրանք պետք է կանոնավոր կերպով մաքրվեն և ախտահանվեն:

2. Պահեստավորումը

Եթե պահեստավորման անհրաժեշտություն կա, պահեստավորման տարածքը պետք է բավարարի հետևյալ պարամետրերը.

Պահեստավորման տարածքը պետք է կողպված լինի այն ժամանակ, երբ չի օգտագործվում, արգելել կողմնակի անձանց մուտքը:
Պաշտպանվածություն ջրից, անձրևից և քամուց:
Մուտքը պահեստավորման տարածքներ պետք է թույլատրվի միայն լիազորված աշխատակիցներին:
Բժշկական թափոնները պետք է պահեստավորվեն այնպես, որ ապահովվի պաշտպանվածությունը կենդանիներից, և տվյալ տարածքը չծառայի որպես բազմացման կամ սնվելու վայր միջատների և կրծողների համար:
Պահեստավորման տարածքը պետք է մշտապես պահվի մաքուր և զերծ այլևայլ աղբից և անշարժ ջրից: Պետք է ախտահանվի ամեն շաբաթ և ամեն անգամ, երբ տեղի է ունենում արտահոսք:

1. Միջանկյալ մշակում և փոխադրում տեղերից

Մեկ խցիկով կիզարանը կամ բաց այրումը պետք է համարվեն միայն վերջին միջոց բժշկական թափոնների տնօրինման և մշակման համար, բացի ախտաբանական թափոններից: